

երեք հազար դրամնքա ստերլինգ (մօտ 24 հազար մանէթ) տարեկան, «Քառակուսի երկայնաձև, բոլորակ, կապոյտ, սպիտակ, նարնջագոյն, առաքոյն, փոքրադիր և մեծադիր մի սաժէն երկարութեամբ մի արշինանոց տառերով, պատկերազարդ և անպատկեր, նոքա կախված են բազմութեամբ գրեթէ մին միւսի վերայ, Բաւական է միայն նոցա նայել, հասկացողութիւն ստանալու համար թէ ինչո՞վ է Լօնդօնը ներկայումս հետաքրքրւում, որտեղ է նա ուրախանում, ի՞նչ է կարգում, ի՞նչ է ուտում, ինչո՞վ է բլծշկւում, որտեղ են առամներ դնում և մազեր ներկում, Թատրօնները դուրս են բերում ժողովրդականութիւն ստացած դերասանների և դերասանուհիների պատկերները, նպարավաճառները կախումեն համադամ կերակուրների ամենագրգռիչ և ախորժակաշարժ բազմատեսակ նկարներ, երկաթուղիները յայտարարումեն գնացքների մասին թէ որտեղ վաճառահանդէս, համերգ, ձիարշաւ, ժողովներ և տօներ կան, Ահա մօտենումէ գնացքը և հարկաւոր է շուտով նստել, որովհետեւ միայն մի րոպէ է կանգնում: Մինչև միւս կայարանը անցնումէք մութ տունէլի մէջով և միայն տեղ տեղ հաստ պատերի կամ աւելի լաւ ասած գետնի կոշտերի վերայ տեսնումէք պատուհաններ, սպիտակ, հարթ մի տեսակ ապակիով: Սոքա լուսամուտներ են, օդաձիգներ, որոնք միացնումեն ստորերկրեայ աշխարհը արտաքին աշխարհի հետ: Ամեն կողմ մութ է, սեւաւ, հեղձամղձուկ, խոնաւ և մռայլ տեսարան է: Ոչ լոյս է երևում և ոչ մի փոքրիկ նշոյլ: Գերեզմանական մութ ու լուութիւն տիրած է և յանկարծ այս լուութեան մէջից լսվումէ աւելի որոշ կերպով շոգեկառքի ձայնը: Գերօրինակ արագութեամբ սլանումէ կամարների տակից և նոր կայարանի սրահին է մօտենում: Տունէլի մէջ, երկաթուղու վագօններում վառված լապտերների օգնութեամբ միայն կարելի է մի որ և իցէ բան տեսնել, իսկ այստեղ, ինչպէս և միւս սրահներում՝ ձեզ կրկին լուսաւորումէ ցերեկվան լոյսը: Այստեղ կարօղ էք կարդալ կայարանի անունը, որ դրոշմված է խոշոր տառերով պատերի վերայ քանի մի տեղ և կարօղ էք իմանալ թէ դուրս պիտի գաք թէ պիտի շարունակէք գնալ երկաթուղու հետ, որը ի հարկէ կրկին սկսումէ սլանալ մի կամ երկու րօպէից յետոյ մինչև իւր նշանակված տեղը:

(Թարգմ.)

Ճէ՛մ. Ե. Դաս. աշ. Ա. 2.

ԲՆԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱԶԳԵՅՈՒԹԻՒՆ,

(Ս. ՍՄԱՅԼՍԻՑ),

Բնաւորութիւնը աշխարհիս մէջ ամենամեծ շարժողոյթերից մին է, Իւր ազնիւ արտայայտութիւններով նա ներկայացնումէ մարդկային բնութիւնը իւր լաւագոյն ձևով, որովհետեւ նա ցոյց է տալիս մարդի ամենալաւ կողմը:

Այն մարդիկ, որոնք աշխատասէր, ճշմարտասէր, բարձր բարոյական և խիստ ազնիւ են, կեանքի ամեն դրութեան մէջ արդարեւ գերազանց են միւսներից, վայելումեն ամենքի և իւրաքանչիւրի ակամայ յարգանքը: Շատ

բնական է որ համարեա ամենքը նոցա են հաւատում, նոցա են ապաւինում և աշխատում են նոցա նմանել, նոցանով է պահպանվում աշխարհի մէջ ամենայն լաւ և բարի բան, և եթէ նոքա չլինէին, մինչև անգամ չարժէր ապրել:

Եթէ հանձարը պատճառումէ զարմացումն, բնաւորութիւնը զխաւորապէս վայելումէ յարգանք: Առաջինն ուղեղի գործն է, երկրորդը—սրտի գործն է. բայց ընդհանրապէս կեանքի կառավարողը սիրտն է. Հանձարաւոր մարդիկ ներգործում են խելքի վերայ, իսկ բնաւորութեան տէր մարդիկ—խղճի վերայ, և մարդիկը հանձարեղներին խորին յարգանք են մատուցանում, բնաւորութիւն ունեցողների ետեւից են գնում:

Մեծ մարդիկ միշտ բացառութիւններ են, և նոյն ինքն մեծութիւնը համեմատական է. Մարդիկներից մեծ մասի իսկական գրութիւնը այնչափ ճնշված է, որ շատ սակաւներ միջոց են ունենում իւրեանց մեծ մարդիկ հանդիսացնելու: Բայց իւրաքանչիւր մարդին հնարաւոր է գործածել աղնիւ, բարեխիղճ և որչափ ոյժը ներումէ ամենալաւ կերպով իւր ընդունակութիւնները. նա կարող է աշխատել, որ այս ընդունակութիւնները ի բարին և ոչ ի չարն գործածէ, նա կարող է աշխատել, որ ամենալաւ գործեր գործ է, նա կարող է լինել հաւատարիմ, ճշմարտասէր, ազնիւ և բարեխիղճ նոյն ինքն մանր բաների մէջ. մի խօսքով, նա կարող է լրացնել իւր պարտաւորութիւնը այն շրջանում ուր դրած է նորան նախախնամութիւնը:

Չնայելով որ իւրաքանչիւրն իւր պարտաւորութիւնը այսպէս կատարելը սովորական է համարում սա կեանքի և բնաւորութեան ամենաբարձր կատարելատիպ է համարվում: Սորա մէջ կարելի է որ ոչինչ հերոսական բան չկայ, բայց հերոսութիւնը, ինչպէս գիտենք, ամեն մարդին վիճակված է: Եթէ որ պարտաւորութեան ճիշդ և անսասան կատարումն մարդին յաճախ հասցնումէ բարձրագոյն տրամադրութիւններին, նոյնը օգնումէ նորան իւր առօրեայ և սովորական գործերի կատարմանը: Մարդի կեանքը «սովորական պարտաւորութիւնների շրջանում է կենդանացած»: Բոլոր առաքինութիւններից աւելի նոքա ազդեցութիւն ունին, որոնք սովորական կեանքի մէջ աւելի են պահանջվում:

Երբ որ բժիշկ Արքութիւնը, որ վերջը Վենետրերի արքեպիսկոպոս եղաւ, նկարագրեց իւր բարեկամ Թոմաս Սէկլիլլի (լորդ—գանձապետ էր Եղիսարէթի և Յակոբ Աի օրով) բնաւորութիւնը, նա չգովեց նորա պետական մարդի և բանաստեղծական տաղանդի արժանաւորութիւնները, այլ կեանքի հասարակ պարտաւորութիւնների մէջ նորա ցոյց տուած մարդկային առաքինութիւնները. «Ո՞րքան արժանաւորութիւններ ունէր նա» ասաց նա.— «ո՞վ նորանից աւելի սիրումէր իւր կինը, — ո՞վ նորանից աւելի բարեխիղճութեամբ էր վարվում իւր որդիների հետ, — ո՞վ նորանից աւելի նուիրված էր իւր բարեկամներին, — ո՞վ աւելի խաղաղութեամբ էր վարվում իւր թշնամիների հետ, — ո՞վ աւելի հաւատարիմ էր իւր խօսքին»: Ար-

գարե մենք միշտ աւելի լաւ կարող ենք հասկանալ և գնահատել մարդի իսկական բնաւորութիւնը, երբ գիտենք թէ նա իւր մերձաւոր մարդիկների հետ ինչպէս է վարված և ինչպէս է կատարել տնային կեանքի առօրեայ գործերը, քան եթէ մենք սկսէինք ուսումնասիրել նորա հասարակական գործունէութիւնը, իրրեւատենարանի, հեղինակի, պետական պաշտօնեայի:

Եթէ պարտաւորութիւնը մեծ մասամբ օգնումէ հասարակ մարդիկների առօրեայ գործերի կատարմանը, նա է նոյնպէս աւելի բարձր բնաւորութեան տէր մարդիկներին շարժող ոյժը: Նոքա կարող են չունենալ ոչ հարստութիւն, ոչ գոյք, ոչ գիտութիւն, ոչ իշխանութիւն, բայց նոքա կարող են լինել սրտով հղօր և հոգով հարուստ, կարող են լինել ազնիւ, հաւատարիմ և պարտաճանաչ, Եւրաքանչիւրը, ով աշխատումէ բարեկեցութեամբ կատարել իւր պարտքը, կատարումէ այն կոչումը, որի համար նա ստեղծված է, և ինքն իւր մէջ բնաւորութիւն է գոյացնում: Պան շատ մարդիկ որոնց մասին կարելի է ասել, որ աշխարհի մէջ բացի բնաւորութենից բան չունին, բայց սոքա համարումեն իրեանց նոյնպէս հղօր ինչպէս որեւիցէ թագակիր անձն:

Մտաւոր զարգացումն բնաւորութեան ազնուութեան և բարձրութեան անհրաժեշտ պայման չէ կազմում: Նոր կտակարանի մէջ անդադար յիշատակվումեն մարդի սիրտը և ոգին, բայց մտքի մասին շատ սակաւ է յիշվում: Մի բուռն բարի գործեր, ասումէ Զօրջ Հէրրէրտ, արժէ ուսումնականութեան մի կողմ: Ի հարկէ, սա չէ նշանակում, թէ հարկաւոր է ուսումն արհամարհել, բայց նա պէտքէ միացած լինի բարութեան հետ: Երբեմն մտաւոր ընդունակութիւնների տէր մարդիկ միեւնոյն ժամանակ ստոր բարոյականութեան տէր են լինում, ցածութեամբ խոնարհումեն բարձր աստիճանաւորների առաջ և մեծամտութեամբ են վարվում իւրեանցից ստորների հետ: Մարդ կարող է հասնել զեղարուեստների, գրականութեան և գիտութեան մէջ կատարելութեան ամենաբարձր աստիճանին, մինչդեռ ազնուութեան, բարեգործութեան, ճշմարտասիրութեան և պարտաճանաչութեան կողմից, հարկաւոր է նորան շատ աղքատ և անգրագէտ գիւղացիներից ստոր դասել:

Դուք պնդեցէք, գրումէր Պէրտսը իւր բարեկամին, թէ հարկաւոր է յարգել ուսումնական մարդիկներին: Ես կասեմ. ամէն, Բայց միեւնոյն ժամանակ հարկաւոր է չմոռանալ, որ խելքի ընդարձակութիւնը, մտքի խորութիւնը, վսեմ բաներ հասկանալը, կենսական փորձառութիւնը, քաղաքավարի վարմունքը, գործերի մէջ հմտութիւնը և եռանդը, ճշմարտասիրութիւնը, ազնուութիւնը, բարեսրտութիւնը—այս բոլոր յատկութիւնները կարող է չունենալ մինչև անգամ շատ գիտնական մարդը:

Երբ Աւալտէր Սկօտտի ներկայութեամբ մի մարդ, խօսելով տաղանդի նշանակութեան և մատենագրական արժանաւորութիւնների մասին, ասաց թէ հարկաւոր է նոցա յարգել և ամեն բանից վեր դասել, Աւալտէր Սկօտտը ասաց. «Աստուած մի՛ արասցէ, որքան թշուառ պիտի լինէր աշխարհս»:

եթէ այդ ճշմարիտ լինէր: Ես իմ կեանքումս շատ զրբեր եմ կարդացել, նկատել եմ շատ գերօրինակ խելացի և երևելի լուսաւորված մարդիկ, բայց հաւատացնումեմ ձեզ, որ աղքատ և տգէտ մարդիկների և կանանց բերանից, երբոր զգուարութիւնների և ցաւերի ժամանակ նոցա մէջ երեւումէր խիստ, բայց միևնոյն ժամանակ համեստ հերոսութեան ոգին, կամ երբ նորա արտայայտումէին պարզ մտքեր իւրեանց ծանօթների և գրացիների հետ եղած պատահարների մասին, ես աւելի բարձր զգացմունքի խօսքեր եմ լսել, քան թէ ուրիշ մի որեւիցէ տեղում, բացի Աստուածաշնչից, Մենք երբէք չենք սովորի ճանաչել մեր իսկական կոչումն և վիճակը և յարգել նոցա, մինչև որ չսովորենք ցնորք համարել ամեն բան առանց սրտի կրթութեան:

Հարստութիւնը հաստատ բնաւորութիւն ունենալու դեռ աւելի պակաս պայման է կազմում: Ընդհակառակն, նա շատ անգամ պատճառ է լինում բնաւորութեան ապականվելուն և ստորանալուն: Հարստութիւնը և վարքի ապականութիւնը, շռայլութիւնը և արատները շատ սերտ կերպով կապված են միմեանց հետ: Հարստութիւնը, եթէ լինումէ այն տեսակ մարդի ձեռին, որը թոյլ է և չէ կարողանում իւրեան զսպել և կառավարել, որի կրքերը վատ ուղղութիւն են ստացել, փորձութեան թակարդ է, կարելի է մինչև անգամ անվերջ շարիքների աղբիւր է թէ նոյն ինքն իւրեան և թէ ուրիշների համար:

Ընդհակառակն աղքատութիւնը երեան է հանում բնաւորութիւնը իւր ամենալաւ կողմերից: Վարդ է մարդս բացի աշխատասիրութենից, չափաւորութենից և ազնուութենից բան չունենալ, բայց և այնպէս նա կարող է ամենալաւ մարդիկների հետ յարգելի տեղ բռնել: Բէքնսի ստացած խրատը իւր հօրից ամենալաւերիցն էր.

«Նա պատուիրեց ինձ պատուով վարվել, եթէ ես մի կօպէկ անգամ չունենամ. որովհետեւ առանց ազնուութեան և հղօր ոգու ոչ ոք մի կօպէկ ևս չարթէ»:

Աւելի պայծառ և ազնիւ անձներից մին, որպիսի երբեմն տեսել է հեղինակը, հիւսիսային կոմսութիւններից մէկի մէջ բնակող մի գործաւոր էր: Նա ուսման սկզբնական տեղեկութիւններ ստացած լինելով մի հասարակ ծխական զպրոցում, շատ խելացի և խոհեմ մարդ էր: Նորա մատենադարանը բաղկանումէր Աստուածաշունչ, Ֆլավէլ և Բօստօն զրքերից, որոնց մասին, բացի առաջնից, երևի ընթերցողներից շատերը երբէք բան չեն լսած: Այս ազնիւ աշխատաւորը կարող էր Ուօրգսուօրսի «Անդուխտ» անունով պատկերի համար լաւ օրինակ լինել: Նա իւր համեստ կեանքը վերջացնելով աշխատութեամբ և աղօթքներով, իւրեանից յետոյ թողեց գործնական խելացի, անկեղծ, բարի և ամեն բարի գործին մասնակցող մարդի յիշատակ, այնպիսի յիշատակ, որին կարելի է կնախանձէին շատ հարուստ և բարձրաստիճան մարդիկ:

Բնաւորութիւնը մարդի անբառնալի սեփականութիւն է: Սա նորա ամե-

Նալաւ հարստութիւնն է: Նա մարդի համար ձեռք է բերում ընդհանուր բարեհաճութիւն և մարդիկներ յարգանք: Ընաւորութեան տէր մարդիկը թէպէտ գուցէ չեն հարստանում երկրային բարեքներով, բայց գտնուածն իւրեանց վարձատրութիւնը ազնուութեամբ և իրաւամբ ձեռք բերած յարգանքի և բարի անունի մէջ: Արդարութիւնը պահանջումէ, որ ազնիւ յատկութիւնները գնահատուէին, որ աշխատասիրութիւնը, բարեգործութիւնը և բարութիւնը ամեն բանից բարձր դասուէին և որ ճշմարիտ լաւագոյն մարդիկը առաջին լինէին:

Մարդի ղիտաւորութիւնների ազնուութիւնը ամեն բանից վեր է կեանքի մէջ: «Ոչ որ, ասաց միանգամ սիր Բէնիամին Ռուդիարդ, պարտաւոր չէ հարուստ, մեծ կամ զիտնական լինել, բայց ազնիւ լինել պարտական է իւրաքանչիւր»:

Բացի նորանից, որ ղիտաւորութիւնները պիտի լինին ազնիւ, նոքա պիտի թելադրված լինին առողջ սկզբունքից, և հարկաւոր է նոցա կատարել խիստ պահպանելով ճշմարտութիւնը, ազնուութիւնը և արդարութիւնը: Առանց սկզբունքի մարդը նման է ղեկ և կողմնացոյց չունեցող նաւին: Նա փոխումէ իւր ուղղութիւնը իւրաքանչիւր քանու փոփոխութեամբ: Նորա համար իբր թէ չկան ոչ օրէնքներ, ոչ կանոններ, ոչ կարգ, ոչ կառավարութիւն: Բարոյական սկզբունքը, ասումէ Իւմ, մատչելի են ամենքին և իւրաքանչիւրին: Նոքա կերպով իմն մարդկութեան մէջ արատներին և անկարգութիւններին հակառակ կուսակցութիւն են կազմում: որոնք նորա սովորական թշնամիներ են: Մի անգամ իւր հարստութեամբ և շռայլութեամբ նշանաւոր մի ատենաբան Հոսոմ գնալիս, այցելեց Եպիկտէտ փիլիսոփային, կամենալով նորա խօսքերից ծանօթանալ նորա վարդապետութեանը: Եպիկտէտն իւր այցելունին ստոնութեամբ ընդունեց, չհաւատալով նորա անկեղծութեանը: Դու պիտի քննես իմ ոճը, ասաց Նա նորան, որովհետեւ դու անկեղծ ցանկութիւն չունիս մեր վարդապետութեան հետ ծանօթանալու: Բարի է, պատասխանեց ատենախօսը: Բայց եթէ ես ընդունեմ քո վարդապետութիւնը, պիտի լինիմ նոյնպէս աղքատ, ինչպէս դու: պիտի չունենամ ոչ հողեր, ոչ կառքեր, ոչ թանկագին անօթներ: «Ես այդ բաներին պէտք չունիմ, պատասխանեց Եպիկտէտը, և բացի դորանից վերջ ի վերջոյ, դու դարձեալ ինձանից աւելի աղքատ ես: Ես քեզանից աւելի հարուստ եմ: Ես չեմ հոգում թէ կեսարը իմ մասին ինչ է մտածում: Ես ոչ որին չեմ շողոքորթում: Ահա իմ հարստութիւններ, որոնք իմ նկատմամբ քո արծաթեայ և ոսկեայ անօթների տեղ են բռնում: Քո անօթները արծաթից են, բայց քո համոզմունքը, կանոնները և ձգտումները կաւից են: Իմ միտքս ինձ համար ամբողջ թագաւորութիւն է, որ ինձ պատճառումէ շատ ակորթելի պարապմունք քո ունայն անգործութեան փոխանակ: Քեզ փոքր են թուում քո կալուածները, իսկ ինձ իմերս մեծ են երևում: Քո ցանկութիւնը անյապ է, իմ բաւարարութիւն ստացած է: »

Տաղանդը ինչպէս և հանճարը շատ հազուադիւս չեն աշխարհիս մէջ։ Բայց կարելի՞ է արդեօք վստահիլ տաղանդաւոր մարդիկներին։— Կարելի՞ է վստահիլ հանճարեղներին։ Ոչ, եթէ նոցա մէջ չկայ բարեխղճութիւն, արդարութիւն։ Այս յատկութիւնը միւսներից աւելի է ձեռք բերում յարգանք և ուրիշների հաւատը։ Մարդը դեռ ևս աշխարհի մէջ իւր նշանակութիւն չէ կորցրած, եթէ յայտնի է, որ նորա վերայ կարելի է յոյս դնել — որ եթէ նա ասէ թէ այս կամ այն բանը գիտէ, և յիրաւի այդ գիտէ, և եթէ ասէ, թէ այս ինչ բանը կանէ, արդարեւ կարող է անել և անշուշտ կանէ։ Այդպիսի հաւատը դէպի նա ամենքի և իւրաքանչիւրի ընդհանուր յարգանքի իրաւունք է տալիս նորան։

Անսակաւ գործերի մէջ այնչափ նշանակութիւն չունի խելքը, որչափ բնաւորութիւնը, ոչ այնչափ ուղեղը, որչափ սիրտը, ոչ այնչափ շնորհները, որչափ ինքնազսպումն, համբերութիւն և բանականութեամբ տնօրինված կարգապահութիւն։ Սորանից երեւում է որ մարդս ամենից առաջ պարտական է հաւաքել թէ մասնաւոր և թէ հասարակական կեանքի համար արդարութեան վերայ հիմնված առողջ դատողութեան բաւական մեծ պաշար։ Փորձերով ձեռք բերած և սրտի բարութեամբ ներշնչված բանականութիւնը վերջ ի վերջոյ միւսնոյն իմաստութիւն է։ Թիրաւի բարութիւնը մինչև մի որոշեալ աստիճան անբաժան է խելքի հետ, ամենաբարձր խելքի հետ։ Խելքի և բարեսրտութեան կապակցութիւնը, արեւակցութիւնը երեւում է շատ բաների մէջ, ասում է սիր Հէնրի Տէյլօր. « Թէ նոքա անբաժան ձեռք ձեռքի տուած են գնում, կարելի է մակարեւել ոչ միայն նորանից որ խելքը մարդին բարեսիրտ է անում, այլև նորանից, որ բարեսրտութիւնը մարդին խելացի է անում »։

Արովհետև բնաւորութիւնը կեանքի մէջ այսպիսի հզօր նշանակութիւն ունի, ուստի և մենք յաճախ տեսնում ենք այնպիսի մարդիկ, որոնց գործը դրած ազդեցութիւնը, ըստ երեւոյթին, նոցա մտաւորական ընդունակութիւններին բոլորովին համեմատ չէ։ Նա կարծես ազդեցութիւն է գործում մի տեսակ սեփական իշխանութեան և մի տեսակ գաղտնի դժի օգնութեամբ, որը ներգործում է ծածուկ, միայն իւր ներկայութեամբ, և ինչպէս որ սասց Բէրկը անցած դարում ապրող ազդեցութիւն ունեցող մի ազնուականի համար. « Նորա բարեգործութիւնները նորա իշխանութիւն ձեռք բերելուն միջոց եղան »։ Այսպիսի ազդեցութեան գաղտնիքը նորա մէջ է կայանում, որ այդպիսի մարդիկների նպատակները, որոնք միշտ մաքուր և ազնիւ են, ներգործում են ուրիշի վերայ համոզական դժով։

Թէև արդար բնաւորութիւն ունեցող մարդիկների նշանակութիւնը շատ դանդաղ է մեծանում, սակայն նոցա իսկական յատկութիւնները չեն կարող բոլորովին աննշմարելի մնալ։ Ոմանք նոցա մասին կարող են սխալ գաղափար ունենալ, ոմանք կարող են լաւ չճանաչել, նոցա կարող են հասնել անբաղդութիւններ և ձախողութիւնների, բայց այս ժամանակ համբերութիւն և անսասան հաստատամտութիւն երեւցնելով, մենք սկսում ենք

անշուշտ նոցա յարգել և նոցա խօսքին հաւատ ընծայել, որին նոքա թողորովին արժանի են:

Շէրիդանի համար ասուեին, որ եթէ նա հաստատ բնաւորութիւն ունենար, այնպէս որ մարդիկ կարօզ լինէին նորա վերայ վստահել, նա պիտի կարողանար աշխարհը կռաւարել: Մինչդեռ նորա բնաւորութեան պակասութեան պատճառով, նորա գեղեցիկ ընդունակութիւնները համեմատաբար շատ սակաւ օգուտ տուին: Նա կուրացնուէր և շլացնում, բայց թէ մասնաւոր, և թէ հասարակական կեանքի մէջ նա զրկված էր ազդեցութենից և նշանակութենից: Մինչև անգամ մի որ և իցէ խեղկատակն իւրեան նորանից գերազանց էր համարում: Օրինակ. մի անգամ Դէլպինի գերասանը պահանջուեց թատրոնի կռաւարչից, որ հատուցանէ իւրեան չվճարված վարձը: Բայց խիստ յանդիմանութիւն ստացաւ Շէրիդանից, որը նորան ասաց, թէ նա մոռանումէ և չէ յիշում թէ ում հետ է խօսում: «Հատ լաւ յիշումէմ, պարոն Շէրիդան, ասաց Դէլպինի, և շատ լաւ հասկանումէմ մեր մէջ եղած զանազանութիւնը: Ծննդեամբ, կապակցութիւններով և կրթութեամբ ի հարկէ դուք ինձանից բարձր էք, բայց բնաւորութեան և վարմունքի նկատմամբ ես ձեզանից գերազանց եմ»:

Շէրիդանի երկրացի Բերկը ընդհակառակն բարձր բնաւորութեան տէր մարդ էր: Նա երեսուն և հինգ տարեկան էր, երբ պարլամենտի (ազգային ժողովի) անդամ դարձաւ, մի և նոյն ժամանակ նա կարողացաւ իւր անունը խոր կերպով զրոյմել Անգլիայի քաղաքական պատմութեան մէջ: Նա շատ շնորհալի մարդ էր և մի և նոյն ժամանակ բնաւորութեան գերբնական ոյժ ունէր, սակայն այնպիսի թոյլ կողմ ևս ունէր, որ շատ ծանր պակասութիւն էր, այն է նա չէր կարողանում իւրեան զսպել, շատ անգամ նորա ձիւղքերը զոհ էին գնում նորա զիւրազրգոութեանը: Առանց ինքնազսպման, որ ըստ երևոյթին շատ երկրորդական յատկութիւն է, ամենապայծառ շընորհներն անօգտակար են լինում իւրեանց տիրոջ համար:

Բնաւորութիւնը մշակվումէ զանազան մանր հանգամանքների մէջ, շատ թէ քիչ նոյն ինքն մարդի առաջնորդութեամբ և վերահսկողութեամբ: Օր չէ անցնում, որ նա մի բան չսովորէ չարը թէ բարին: Չկայ մի գործ, որչափ և չնչին լինի, որ իւր հետեանքը չունենայ, ինչպէս որ չկայ մի մազ, որչափ և փոքր լինի, որ ստուեր չձգէ: Տիկին Ըիմէլպէնինկի մայրը շատ խելացի կերպով ասաց, որ երբէք հարկաւոր չէ հպատակել մանր բաներին, ապա թէ ոչ, այդ մանր բաները, որչափ ևս մարդը նոցա արհամարհէր, կսկսեն նորան կռաւարել:

Իւրաքանչիւր գործողութիւն, իւրաքանչիւր միտք, իւրաքանչիւր զգացումն ընդհանրապէս բնաւորութիւն, սովորութիւններ և հասկացողութիւնների կազմելու մէջ իւրեանց մասն ունին և անշուշտ ազդեցութիւն կունենան մարդի ապագայ գործողութիւնների վերայ: Ուրեմն բնաւորութիւնը ենթարկված է անդադար փոփոխութեան կամ դէպի լաւագոյնը կամ դէպի վատագոյնը կամ բարձրանումէ կամ ստորանումէ: «Չկայ մի սխալ, չկայ

մի յիմարութիւն իմ կեանքիս մէջ, ասումէ միստէր Բէսկին, որոնց յիշատակութիւնը միշտ իմ առաջն գալով, չիլէր ինձանից իմ ուրախութիւնը և չկտարէր իմ գաղափարելուս, ըմբռնելուս և հասկանալուս ոյժը, Մինչդեռ իմ վերայ գործ դրած իւրաքանչիւր անցած ուժգնութիւնը և իմ կեանքիս մէջ ամենագնիւ և լաւ արարքներս, այժմ ինձ հետ են և օգնումն ինձ չարի դէմ արած պատերազմիս մէջ ։

Մեքենագիտութեան օրէնքը, թէ ներգործութիւնը և հականերգործութիւնը հաւասար ոյժ ունին նոյնպէս ճիշտ է բարոյականութեան վերաբերմամբ, Լաւ գործերը ներգործումն նոցա վերայ, որոնք նոցա կատարումն և յառաջացնումն ընդդիմագործութիւն, մի և նոյն ներգործութիւնը անումն վատ գործերը, Գեռ սա բաւական չէ, օրինակի ոյժով այդ գործերը մի և նոյն ազդեցութիւն են անում նոցա վերայ, որոնց վերաբերմամբ կատարվումն նոքա, Հանգամանքները մարդին չեն ստեղծում, աւելի ճիշդ է, որ մարդս է ստեղծում հանգամանքները, Գեռտէի կենսագրութեան մէջ կարգումներ հետեւեալը. « փոխանակ ասելու թէ հանգամանքները մարդին ստեղծումն, աւելի ուղիղ կլինէր ասել, թէ մարդը հանգամանքների ճարտարապետն է, Բնաւորութիւնը մարդի համար հանգամանքներից դուրս գոյութիւն է ստեղծում, Մեր կարողութիւնը չափվումէ արարչութեան ոյժով, Մի և նոյն նիւթերից մի մարդ շինումէ պալատներ, միւսը խրճիթներ, մինը մառաններ, միւսը ամարանոցներ, Աղիւսը և կիրը կիր և աղիւս են, մինչև որ ճարտարապետը նոցա չգարձներ ուրիշ մի բան, Ահա թէ ինչի համար մի և նոյն ընտանիքում, մի և նոյն հանգամանքներում, մի եղբայրը շինումէ իւր համար գեղեցիկ շինութիւն, մինչդեռ միւսը, այսօր վաղը ասելով, իւր կեանքը անցուցանումէ աւերակների մէջ, Ճանապարհին ընկած զրանիտի կտորը թոյլին արգելք է լինում, իսկ զօրեղին վեր բարձրանալու աստիճան է դառնում ։

Ամբի ազատութիւն ունենալով, մարդս կարող է իւր գործերն այնպէս տնօրինել, որ նոքա աւելի դէպի լաւն ուղղված լինին քան թէ դէպի վատը, Ոչ ոք չէ կարող ինձ այնքան փնաս տալ, որքան ես ինքս, ասաց ս. Բէրնարը, և իմ պաշտպանած չարիքը յաւիտեան ինձ հետ է, և եթէ ես արդարեւ չարչարվումեմ երբեմն, յանցանքը բոլորովին իմն է ։

Առանց ուժգնութիւնների չէ կարող բնաւորութիւն կազմել բարոյականութեան կողմից նոյն ինքն ամենալաւ մարդն անգամ, Սորա համար մարդից պահանջվումէ, որ նա անզգայար աշխատէ իւր անձի վերայ հակել, իւրեան զսպել և խիստ լինել դէպի իւր անձն, Այս ժամանակը ի հարկէ կարող են լինել մասնաւոր տարակուսանքներ, յետ դառնալու պէտք, և նոյն իսկ ժամանակաւոր հարուածներ, կարող են պատահել դժուարութիւնների, փորձանքների, որոնց դէմ պէտքէ պատերազմել ջանալով նոցա յաղթել, Բայց հաստատ ոգու և ազնիւ հոգու տէր մարդը չպիտի յուսահատի, այլ ընդ հակառակն պիտի հաստատապէս յուսայ, որ վերջը պիտի յաջողութիւն գտնէ, նոյն ինքն առաջ գնալու այս ուժգին աշխատութիւնը մեր ունե-

ցածից աւելի բարձր բարոյականութիւն ձեռք բերելու համար, քաջալերելու և հզօրացնելու յատկութիւն ունի, և եթէ մեզ չյաջողի և մինչև անգամ հասնել մեր նպատակին, մեր մէջ անշուշտ մի բարւոյրումն յառաջ կգայ ամեն անգամ, երբ մենք ազնիւ ճիգ ենք լծափում բարձրացնելու մեր բարոյականութեան հօրիզօնը:

Դիտելով մեծամեծ օրինակները, մարդկութեան ընտիր ներկայացուցիչները՝ իւրաքանչիւր մարդ ոչ միայն իրաւունք ունի այլև պարտական է ձգտելու որ հասնէ բարձրագոյն բնաւորութեան. նա պիտի ջանայ լինել ամենահարուստը ոչ թէ նիւթական միջոցներով, այլ ոգով. լինել բարձրաստիճան ոչ թէ իւր հասարակական գրութեամբ, այլ իւր խիստ ազնուութեամբ. լինել ոչ թէ խելքով ամենազարգացած մարդ, այլ ամենաբարեգործ. ոչ թէ ամենահզօր և ամենից շատ ազդեցութիւն ունեցող անձն, այլ ամենաճշմարտասէր և ամենազնիւ մարդ:

Պայմանները զրելիս, որոնք անհրաժեշտ են հրապարակական մրցանակ ստանալու համար, որ հատուցանվումէր իւրաքանչիւր տարի Աէլլինգտօնի վարժարանին լծագուհու դումարներին, արքայազն Ալլէրտը ինքն ամենաբարձր աստիճանի բարոյական մարդ գտնով և իւրեան շրջապատող մարդիկների վերայ միայն իւր բարեսիրտ բնութեան դժի շնորհով մեծ ազդեցութիւն ունենալով, շատ նշանաւոր կերպով վճռեց, թէ մրցանակը տալու է ոչ թէ ամենախելացուն, ամենից շատ կարգացողին, ջանասէր կամ խոհեմ մանուկին, այլ նորան, ով գերազանց է իւր բնաւորութեան ազնուութեամբ, որ ամենամեծ յոյսեր է տալիս մեծ հոգու և բարձր ձգտումների տէր լինելու:

Բնաւորութիւնը երևումէ գործելու եղանակին, որը ներշնչումն և ուղղումն սկզբունքը, ազնուութիւնը և գործնական իմաստութիւնը, և սա ոչ այլ ինչ է, եթէ ոչ անձնական կամք, որը եռանդով ներգործումէ կրօնի, բարոյականութեան և խելքի ազդեցութեան տակ, Բնաւորութեան տէր մարդը մտածելով ընտրումէ իւր ճանապարհը և անստան գնումէ: Նորա համար պարտաւորութիւնը մարդկային կարծիքից բարձր է, և խղճի հանգստութիւնը բոլոր աշխարհի գովասանքից: Յարգելով ուրիշների անձնաւորութիւնը, նա միեւնոյն ժամանակ պաշտպանումէ իւր անձնաւորութիւնը և անկախութիւնը. նա բաւական քաջութիւն ունի բարոյապէս մաքուր լինելու, եթէ մինչև անգամ նորա վարմունքը ժողովրդականութիւն չունենար. նա հանգիստ սպասումէ որ ժամանակը և փորձը նորան կարգարացնեն:

Չնայելով որ օրինակը մեծ ազդեցութիւն ունի բնաւորութեան զարգացման վերայ, սակայն միշտ նորա գլխաւոր հիմը կլինի մարդի սեփական ոգու արարչական և կազդուրող դժը: Միայն այս դժը կարող է բարձրացնել կեանքը և տալ մարդին անձնական անկախութիւն և եռանդ:

Եթէ մարդը չէ կարող իւրեանից բարձր կանգնել, ասաց Դանիէլը, որ Եղիսաբէթի ժամանակ բանաստեղծ էր, ինչպէս ընչին է մարդը, Առանց գործնականապէս ներգործող դժի, որը բնաւորութեան հիմ կազմող կամքն է և բնաւորութեանը ուղղութիւն տուող խոհեմութիւնն է, կեանքը զրոյ-

ժամ կլինէր որոշ նպատակից, այն ժամանակ նա կնամներ մի կանգնած ջրին և շէր լինի օգտակար հոսանք, որ շարժումէ ամբողջ երկրի մէքնանները:

Երբ բնաւորութեան բոլոր տարրերը շարժողութեան մէջ են բերված որոշ կամքով բարձր նպատակի ազդեցութեան տակ, և մարդը մտնումէ իւր պարտաւորութեան ճանապարհի մէջ և քաջութեամբ մնումէ նոյն տեղ, լեռնային և այս պատճառ լինէր նորա աշխարհական շահերի կորուստին, այդպիսի մարդի համար կարելի է ասել, որ նա մտնումէ իւր գոյութեան ամենաբարձր աստիճանին, նա ցոյց է ապրիս բնաւորութիւնը ամենախառն կողմից և մարմնացնումէ քաջութեան ամենաբարձր գաղափարը, Այդպիսի մարդի գործերը կրկնվում են սերիւնների կեանքի և գործողութիւնների մէջ, նոյն իսկ նորա խօսքերը ապրում են և գործողութիւնների են փոխվում:

Միւս կողմից եւանդը, առանց ազնուութեան և առանց բարեգործութեամբ ոգևորված լինելու, կարող է միայն շարութեան մարմնացած տարր լինել, նիւթալիւր իւր «Մտքեր բարոյականութեան վերայ» անունով հեղինակութեան մէջ ասած է, որ բարոյական կատարելութեան կատարելատիպի համար շկայ աւելի վտանգաւոր լինումի, քան լեքարձրացնելն ոյժի և ջերմեան դադարն կեանքի կատարելատիպը: Եւելացրէք սորան հպարտութեան, փառասիրութեան և եսականութեան խառնուրդը և դուք դեռ իսկական կատարելատիպ կատանաք: Այս մարդիկների կարգին են պատկանում աշխարհի աւերողները և կործանիչները, այն ընտրեալ անպիտանները, որոնց նախաինամութիւնը իւր անքննելի նպատակներով լծող է տալիս կատարելու աշխարհի մէջ իւրեանց կործանիչ կոչումն:

Այս կարգին կարելի է վերաբերել նաղօլէօնին ևս, որը ահագին եւանդունէր, բայց զուրկ էր սկզբունքից, նա մարդիկների մասին ամենատար գաղափար ունէր. «Մարդիկը, ասումէր նա, խոզեր են, որոնց սնուցանում են ոսկով: Ես նոցա առաջ ձգում եմ ոսկի և տանում եմ նոցա ուր որ ինձ հաճելի է: Արբա Պրատին, Մալինի արքեպիսկոպոսին, 1812 թ. Լեհաստան զննական ուղարկելիս, նաղօլէօնը հրաժարական ողջոյնի ժամին նորան հեռեկալ հրահանգ տուաւ. «Tenez bonne table et soignez les femmes» (ուշիցէք լաւ սեղան և պահպանեցէք կանանց): Բէնժամէն Կօնստանը ասաց, որ լոյլ, 60 ամեայ քահանային արած այս նկատողութիւնը ցոյց է տալիս Բօնապարտի արհամարհանքը դէպի մարդկային ազգը առանց զանազանելու սեռը և հասակը:

Բոլորովին ուրիշ է ներկայացնում այն մարդը որի բնաւորութեան եւանդը ներշնչված է ազնիւ ոգուց, որի գործերը կառավարումէ արդարութիւնը և որի համար պարտաւորութիւններ կատարելը կեանքի օրէնք է: Նա ճշմարտասէր և ազնիւ է իւր հասարակական գործունէութեան, իւր մասնաւոր գործերի և ընտանեկան կեանքի մէջ, որովհետեւ ճշմարտութիւնը լեք ընտանիք և լեք մի ամբողջ ժողովուրդ կառավարելու համար անհրաժեշտ պայման է, նա կլինի ազնիւ ամեն բանի, խօսքերի և գործերի

մէջ, կրնի վեհանձն և ներողամիտ լծէ դէպի իւր լծնամիները և լծէ դէպի բնաւորութեամբ իւրեանից թոյլ մարդիկները: Հատ իրաւացի ասված է Հերիզանի մասին, որն իւր ամեն անխոհեմութեամբ հանդերձ, վեհանձն էր և ոչ որին չէ վիրաւորած: Լծէ նորա խելքը, որ նոյնչափ հրապուրական էր, որչափ և պայծառ, ոչ մի ժամանակ նա պատերազմից իւր սրի բերանի վերայ արիւնի հետքեր չէ դուրս բերել:

Նոյնպիսի էր Փօկսի բնաւորութիւնն ևս, որը իւր միշտ հաւատար համակրութեամբ և բարեսրտութեամբ գրաւեց մարդիկների սէրը և հաւատարմութիւնը: Սա այն տեսակ մարդ էր, որի վերայ շատ հեշտ կարելի էր ներգործել նորա ազնուութեան դիպելով: Օրինակ մի անգամ, պատմութեան, նորա մօտ եկաւ մի վաճառական նորանից փող ստանալու, գրաւոր պայմանի համաձայն, որ և ներկայացրեց: Փօկսը այդ ժամանակ ոսկի էր համարում: Վաճառականը պահանջեց որ անմիջապէս հատուցանէ իւր առաջ գտնված փողից: «Ոչ, ասաց Փօկսը, այս փողերը ես պարտաւոր եմ առնու: Հերիզանին, ես նորանից փող փոխ առայ աղնիւ խօսքով միայն և լիճէ ինձ մի փորձանք հասնէ: Նա կկորցնէ իւր փողերը, որովհետեւ նա ոչինչ ապացոյց չունի, որ ես նորան փող եմ պարտական: — Եթէ այդպէս է — պատասխանեց վաճառականը, — ես ևս ձեզ կհաւատամ խօսքով: » և այս ասելով պատռեց մօրհալը: Այս վարմունքը յաղթեց Փօկսին: Նա շնորհակալ եղաւ վաճառականին նորա առ ինքն ունեցած հաւատարմութեան համար և խելոյն նորան պարտքը վճարեց ասելով. «Ի՛նչ պէտքէ արած, այժմ Հերիզանը կպարտաւորվի սպասելու, որովհետեւ իմ քեզ ունեցած պարտքս աւելի հին է: »

Բնաւորութեան տէր մարդը իւր ամեն մի խօսքի և ամեն մի գործի մէջ բարեխիղճ է: Երբ որ Արօմվէլ խնդրումէր ազգային ժողովից զինուորների փոխանակ ծերացած ծառաների և սպասաւորների, որոնք լցված էին հասարակապետական զօրքում, նա պահանջումէր, որ նորան այնպիսի մարդիկ տան, որոնք իւրեանց տրամների գոնէ սակաւ ինչ ճանաչողութիւն ունենային և յիրաւի նորա «երկամեայ ձեռներ» կոչված նշանաւոր գունդը այսպիսի մարդիկներից էր կազմված:

Բնաւորութեան տէր մարդը յարգող է: Այս յատկութիւն ունենալը նշանակումէ բարձր և ազնուագոյն ծագման առանձնական նշան ունենալ լծէ տղամարդի և լծէ կնոջ համար: Նա յարգանք է մատուցանում այն բաներին, որոնք քանի մի սերունդների նուիրական յարգանքով սրբագործված են, — վսեմ խորհուրդներին, բարձր կատարելատիպերին և ազնիւ նպատակներին: անցած ժամանակի մեծ մարդիկներին և մեր ժամանակի մտածող աշխատաւորներին: Յարգողութիւնը, պատկառանքը կամ ակնածութիւնը անհրաժեշտ կարեւոր է լծէ մի անձի, լծէ ընտանիքի և լծէ մինչև անգամ ամբողջ ժողովրդի բաղադրութեան համար: Առանց յարգանքի չեն կարող գոյութիւն ունենալ ոչ հաւատը, ոչ հաւատարմութիւնը, ոչ յոյս առ Աստուած, և մանաւանդ առ մարդ, ոչ հասարակական անդորրու-

միւն ոչ յառաջագիմութիւն: Յարգանքը միւնոյն կրանն է, որը կապում է մարդիկներին միմեանց հետ և ամենքին—Աստուծու հետ:

«Ազնիւ հոգի ունեցող մարդը ասում է Թոմաս Օվերբրիերի կարողա-
նում է իւրաքանչիւր իրողութենից օգտվել իւր փորձառութիւնը աւելացնե-
լու համար: Այս փորձառութեան և իւր բանականութեան մէջ կայ մի
կապ, իսկ այս կապի պատուէն են նորա գործերը: Նա ներգործում է սիրոյ
անունով, բայց ոչ թէ սէր վաստակելու ցանկութեամբ, նա սիրում է
փառքը, դարչում է խոյտառակութենից: Նա ստորադրում է և իշխում է
միւնոյն յոժարութեամբ, որովհետեւ թէ մէկը և թէ միւսը հիմնված են
յարգանքի վերայ: Նա բանականութիւնը բնութեան օգտակար պարզ և
համարելով, իւր սեփական փիճակի ղեկավար է դառնում: Նա սիրահար-
ված է ճշմարտութեան վերայ, նա աշխատում է թէ ճշմարտութեան
նմանութիւնը միայն, այլ նոյն ինքն ճշմարտութիւնը ձեռք բերելու:

Հասարակութեան մէջ նա երեւում է իրրեւ արեգակ, որի ճաճանշներին
շնորհով մարդիկներին քայլեր կարողանում են կանոնաւոր շարժողութիւն
ունենալ, նա բարեկամ է խելացի մարդիկներին, օրինակ է միջակ մար-
դիկների համար և թշնամի է արատաւորների, ժամանակը նորանից չէ
փախչում, այլ նորա հետ միասին է գնում: Նորա ծերութիւնը երեւում է
ակարացած ոչ այնքան մարմնի թուլութեամբ, որքան հոգեկան դժերի
ամրութեամբ: Հիւանդութիւնները և ցաւերը նորա համար շարժարանքների
աղբիւր չեն դառնում: Նա նոցա այնպիսի բարեկամներ է համարում,
որոնք ցանկանում են նորա շղթաները քանդել և օգնել նորան բանտից
զուրա դաշու:

Վամբի եռանդը, որը ինքնագոյ յոյժ է, ամենաբարձր բնաւորութեան
հիմ է: Այնտեղ ուր նա կայ, կեանքն ևս կայ, իսկ որտեղ նա չկայ, կան
թուլութիւն, անօգնականութիւն և վհատութիւն: «Հոգի մարդը և ջուր-
վեժը, ասում է առաժը, իւրեանք են բանում իւրեանց համար ճանապարհ»:
Ազնիւ ոգի ունեցող եռանդուն մարդը ոչ միայն իւր համար ճանապարհ է
գտնում, այլ իւր ետեւից ուրիշներին ևս կտանէ: Նորա իւրաքանչիւր գոր-
ծողութիւնը նորա ներքին Ես է արտայայտում: Իւրաքանչիւր գործողութեան
մէջ երեւում են յոյժ, անկախութիւն և հաւատ առ ինքն, ուստի անշուշտ
գրաւում է ընդհանուր յարգանք, զարմացում և պատիւ: Բնաւորու-
թեան այսպիսի աներկիւղութիւնը Սրօմվէլի, Ուաշինկտօնի, Պիտտի,
Աէլլինգտօնի և ընդհանրապէս այն մարդիկների բնաւորութեան առան-
ձին յատկութիւն էր, որոնք որ և իցէ շարժման պարագլուխ են դառնում:

«Ես համոզված եմ, ասաց միստեր Վլադստօն ազգային ժողովում,
հանգուցեալ լօրդ Պարմէրստօնի արժանաւորութիւնները նկարագը-
րելիս, նորա մահից յետոյ չուտի—ես համոզված եմ, որ միայն կամբի յոյժը,
խորին պարտաճանաչութիւնը և շղիջանկու հաստատ որոշումն նպատե-
ցին նորան, որ նա մեր ամենքիս համար օրինակ եղաւ, և մենք թող և ան-
հաւասար քայլերով հետեւում ենք նորան մեր պարտականութիւնները կա-

տարեկու համար: Պարեկի է դարձեալ յիշել նորա միւս յատկութիւնն ևս: առանց ամենեւին երկիւղ կրելու ծանր զգացմանը յարուցանելու որ մինի հոգու մէջ այս յիշողութեամբս: Այս յատկութիւնն այն էր, որ լորդ Պալ-մերստօնը երբեք չէր կարող երկար բարկանալ և ընդհանրապէս չէր յանձ-նելում որեւիցէ թշնամական զգացման: Բարկութեան այս բացակայու-թիւնը ծանր ուժգնութիւնների հետեանք չէր: այլ նորա հոգու բնական ընդունակութիւնն էր: Սա նորա ինքնագոյ բնութեան վսեմ շնորհներից մին էր, որը նկատելի էր ամենամեծ վայելչութեամբ: Ախորժելի է յիշել այդ յատկութիւնը այժմ ևս, երբ նորա տէրը մեզանից մեկնվեցաւ և նորա հետ կարող ենք կապ պահպանել: միմիայն աշխատելով օգտվել նորա օրի-նակով պարտաճանաչութեան և ճշմարտութեան ծանապարհի վերայ: և մատուցանելով նորան այն յարգանքը և սէրը, որ նա մեզանից ստանալու բոլորովին արժանի է: *

(Պէտք է շարունակել)

ՃԷՏ. Ե. Դաս. աշ. Թ. Պ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑՆԵՐ.

Հրատարակելով Սինօգում գտնված փճակագրական տեղեկութիւնները հայկական դպրոցների մասին, կցաւինք, որ Բեսարաբիայի և Ասորախա-նի թեմերից չկան տեղեկութիւններ, և կ'յուսանք որ փոյթ ունենալու են շուտով հասցնելու:

ԽԺՔ.

Արական սե- սի հոգեւոր ծխական դպրոցներ.		Իգական սե- սի հոգեւոր ծխական դպրոցներ.		Գեղարարական դպրոցներ.	
Թիւ	Գրք.	Թիւ	Գրք.	Թիւ	Գրք.
1	1	1	1	1	1
2	2	2	2	2	2
3	3	3	3	3	3
4	4	4	4	4	4
5	5	5	5	5	5
6	6	6	6	6	6
7	7	7	7	7	7
8	8	8	8	8	8
9	9	9	9	9	9
10	10	10	10	10	10
11	11	11	11	11	11
12	12	12	12	12	12
13	13	13	13	13	13
14	14	14	14	14	14
15	15	15	15	15	15
16	16	16	16	16	16
17	17	17	17	17	17
18	18	18	18	18	18
19	19	19	19	19	19
20	20	20	20	20	20
21	21	21	21	21	21
22	22	22	22	22	22
23	23	23	23	23	23
24	24	24	24	24	24
25	25	25	25	25	25
26	26	26	26	26	26
27	27	27	27	27	27
28	28	28	28	28	28
29	29	29	29	29	29
30	30	30	30	30	30
31	31	31	31	31	31
32	32	32	32	32	32
33	33	33	33	33	33
34	34	34	34	34	34
35	35	35	35	35	35
36	36	36	36	36	36
37	37	37	37	37	37
38	38	38	38	38	38
39	39	39	39	39	39
40	40	40	40	40	40
41	41	41	41	41	41
42	42	42	42	42	42
43	43	43	43	43	43
44	44	44	44	44	44
45	45	45	45	45	45
46	46	46	46	46	46
47	47	47	47	47	47
48	48	48	48	48	48
49	49	49	49	49	49
50	50	50	50	50	50
51	51	51	51	51	51
52	52	52	52	52	52
53	53	53	53	53	53
54	54	54	54	54	54
55	55	55	55	55	55
56	56	56	56	56	56
57	57	57	57	57	57
58	58	58	58	58	58
59	59	59	59	59	59
60	60	60	60	60	60
61	61	61	61	61	61
62	62	62	62	62	62
63	63	63	63	63	63
64	64	64	64	64	64
65	65	65	65	65	65
66	66	66	66	66	66
67	67	67	67	67	67
68	68	68	68	68	68
69	69	69	69	69	69
70	70	70	70	70	70
71	71	71	71	71	71
72	72	72	72	72	72
73	73	73	73	73	73
74	74	74	74	74	74
75	75	75	75	75	75
76	76	76	76	76	76
77	77	77	77	77	77
78	78	78	78	78	78
79	79	79	79	79	79
80	80	80	80	80	80
81	81	81	81	81	81
82	82	82	82	82	82
83	83	83	83	83	83
84	84	84	84	84	84
85	85	85	85	85	85
86	86	86	86	86	86
87	87	87	87	87	87
88	88	88	88	88	88
89	89	89	89	89	89
90	90	90	90	90	90
91	91	91	91	91	91
92	92	92	92	92	92
93	93	93	93	93	93
94	94	94	94	94	94
95	95	95	95	95	95
96	96	96	96	96	96
97	97	97	97	97	97
98	98	98	98	98	98
99	99	99	99	99	99
100	100	100	100	100	100

Ա. Արեւելի թիւեր.

Երեւան քաղաքում կայ մի դպրանոց (սեմինարիա).	12	197			
Ծխական դպրոցներ	2	8	146	3	8
Երեւանի գաւառում	10	11	310		
Էջմիածնի գաւառում	8	14	355	2	5
Սուրմալուի գաւառում	5	10	340	1	5
Հարուրի գաւառում	2	2	100		
Նախիջևանի գաւառում	11	20	506	3	15
Տաթևի վանքում (Ձանդեաղօրի գաւառում)	1	2	30		
Նոր Բայազէդ քաղաքում	1	2	95	1	3
Նոր Բայազէդի գաւառում	2	2	72		
Ալեքսանդրապոլ քաղաքում	8	23	652	2	22
Ալեքսանդրապոլի գաւառում	11	20	400	1	4
Ափշապի վանքում (Ալեքսանդ. գաւառ.)	1	3	35		